2020

ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐ

ՀՀ ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Պարույր Սեվակի փողոց 51/11 և Տոնյան փողոց 14

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Զ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ԷՅՋ ԲԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Ա/Զ Ա. Գալոյան ՀՀ
ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐ

ՀՀ ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Պարույր Սեվակի փողոց 51/11 և Տոնյան փողոց 14

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ԷՅՋ ԲԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ տնօրեն՝ Հ. Ալեքսանյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ

Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4
1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն 4
1.3 Հապավումներ 4
1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը 5
1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) 6
1.5.1 *Ներկա վիճակի նկարագիր* 6
1.5.2 *Նախատեսվող գործունեության նկարագիր* 6
1.5.3 *Քանդման աշխատանքներ* .... **Error! Bookmark not defined.**
1.5.4 *Նախատեսվող աշխատանքների կազմակերպում* .... **Error! Bookmark not defined.**
1.5.5 *Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ* 11
1.5.6 *Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց* 13
1.5.7 *Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ* 14
1.5.8 *Նյութերի և բնարեսուրսների օգտագործում* .... **Error! Bookmark not defined.**
1.5.9 *Արտաքին ցանցեր* 19
1.5.10 *Էլ. մատակարարում* 20
1.5.11 *Ջրամատակարարում և ջրահեռացում* .... **Error! Bookmark not defined.**
1.5.12 *Գազամատակարարում* 20
1.5.13 *Կանաչապատման աշխատանքներ* 21
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ 22
2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները 22
2.2 Կլիման 23
2.3 Օդային ավազան 28
2.4 Ջրային ռեսուրսներ 31
2.5 Հողերի նկարագիրը 32
2.6 Հողային ռեսուրսներ 32
2.7 Բուսական աշխարհ 33
2.8 Կենդանական աշխարհ 33
2.9 Հողերի նպատակային և գործառնական նշանակությունը. **Error! Bookmark not defined.**
2.10 Թափոնների կառավարում 34
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 34
3.1 Ռիսկերի գնահատում 35
3.2 Արտանետումների աղբյուրները 35
3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն 35
3.3.1 *Մթնոլորտային օդ* 35
3.3.2 *Ջրային ռեսուրսներ* 36
3.3.3 *Հողային ռեսուրսներ* 36
3.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը* 37
3.3.5 *Աղմուկ և թրթռում* 37
3.3.6 *Թափոնների կառավարում* 38
3.3.7 *Տարածքի բարեկարգում կանաչապատում* 38
4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ 39
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 40
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ 43
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 37
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 38

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ **«ԷՅՋ ԲԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ **ՀՀ., ք. Երևան, Ավետիսյան 4փ, 10/26**

1.5 Նախատեսվող գործունեության հասցեն՝ **ՀՀ ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչականշրջան Պարույր Սեվակի փողոց 51/11 և Տոնյան փողոց 14**

1.6 Հեռախոս՝ **+37499994222**

1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝

1.3 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Պարույր Սեվակի փողոց 51/11 և Տոնյան փողոց 14 հասցեներում:

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 *Ներկա վիճակի նկարագիր*

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Պարույր Սեվակի փողոց 51/11 և Տոնյան փողոց 14 հասցեներում:

Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Տեղանքը հարթ է: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Հողամասի մակերեսը կազմում է 0.4636 հա, որից 0.3962 հա սեփականություն՝ (կադաստրային ծածկագիր՝01-012-0223-0022) և 0.0674հա ընդհանուր համատեղ սեփականություն (կադաստրային ծածկագիր՝01-012-0223-0023) + 0.09563հա սեփականություն (կադաստրային ծածկագիր՝01-012-0223-0198):

Համաձայն ընկերության կողմից ստացած N01/18-25333 -17 քանդման թույլտվության և N01/18-44257-605 շինարարության թույլտվության, կառուցապատման ենթակա տարածքում արդեն իսկ իրականացվել են գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժման և Բ և Գ մասնաշենքերի հիմքերի փորման աշխատանքները (թույլտվությունները կցված են հավելվածների բաժնում):

Տարածքը եղել է ասֆալտապատ, բուսականությունը բացակայում է:

Հարևանությամբ գտնվում են բնակելի և հասարակական շենքեր:

1.5.2 *Նախատեսվող գործունեության նկարագիր*

<u>Քանդման աշխատանքներ</u>

Համաձայն N01/18-25333 -17 քանդման թույլտվության նախատեսված է քանդել և ապամոնտաժել Ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Պարույր Սեվակի փողոց 51/11 և Տոնյան փողոց 14 հասցեներում առկա քանդման ենթակա շինությունները:

Քանդման ենթակա շինությունների ընդհանուր մակերեսը կազմում է 1016.4մ^2, շին աղբի ծավալը՝ 1254տն:

Քանդման ենթակա շինություններն են՝

- Պահակատուն՝ 25.1քմ
- Ինքնակամ շինություն՝ 1.7քմ
- Խանութ՝ 410.1քմ
- Ավտոտնակ՝ 192.2քմ
- Պահեստ՝ 387.3քմ

Քանդման և ապամոնտաժման աշխատանքները պետք է կատարել ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Բոլոր տիպի քանդման և ապամոնտաժման աշխատանքները պետք է կատարել պահպանելով անվտանգության կանոնները, մասնավորապես մշակելով լրացուցիչ միջոցառումներ արտացոլելով աշխատանքների կատարման նախագծում ԱԿՆ/:

Տվյալ կոնստրուկցիան ապամոնտաժելուց առաջ անհրաժեշտ է նախապատրաստել այն ապամոնտաժման՝ անջատել բոլոր տիպի կապերից:

Կոնստրուկցիայից բացակայող բռնիչների համար պետք է մշակել նոր հուսալի բռնիչներ՝ ստուգելով կրկնակի բեռի ծանրության տակ, ինչպես նաև վավերացնելով տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից գրավոր փաստաթղթով: Ապամոնտաժման աշխատանքներում զբաղված բրիգադի անդամները /18տարին լրացած/ պետք է շինարարության ղեկավարի կողմից ստանան հատուկ կարգադիր-թույլտվություն տվյալ աշխատանքի կատարման համար և համապատասխան հրանգավորումներ, հանձնելով ստացած գիտելիքների համար քննություն, որը վավերացնում է հատուկ ակտ-թույլտվությամբ:

Տվյալ տեղամասում, որտեղ կատարվում են ապամոնտաժման աշխատանքները, արգելվում է այլ տեսակի աշխատանքների կատարումը: Ապամոնտաժված կոնստրուկցիայի տեղափոխման պահին էլեմենտի ճոճից և պտտվելուց խուսափելու համար պետք է ուղղորդել հատուկ ճկուն ճոպանների օգնությամբ: Չի թույլատրվում ընդմիջումների պահին բարձրացված էլեմենտը թողնել կախված վիճակում: Մոնտաժողները /ապամոնտաժողները/ մեկ էլեմենտից մյուսը անցնելիս պետք է օգտագործեն համապատասխան գույքային աստիճաններ, անցումային կամրջակներ պաշտպանիչ բազրիքներով, որոնք պետք է ամրացված լինեն տվյալ կոնստրուկցիային բարձրացնելուց առաջ քամու արագությունը բաց տեղամասում 15մ/վ և ավելի դեպքում դադարեցնել ապամնտաժման աշխատանքները: Ապահովել կռունկավարի և ճոպանասարքերի հետ աշխատողների անմիջական հրահանգային կապը:

Անվտանգության տեխնիկայի վերաբերյալ բոլոր հրանգավորումները վավերացնել վարման նատյաններում սույն աշխատանքում զբաղված մասնագետի ստորագրությամբ:

Աշխատանքների կատարման նախագծում լրացնել բոլոր տիպի ապամոնտաժվող հավաքովի ե/բ կոնստրուկցիաների ցանկը /օգտվելով կազմակերպման նախագծով նախատեսված/ ըստ երկրաչափական և քաշային բնութագրերով:

Քանդման աշխատանքների ժամանակ հաշվի է առնված քանդումից առաջացած պիտանի նյութերի քանակը և առաջարկվում է այն տեղափոխել պահեստային տարածքներ, որի համար կազմվում է համապատասխան ընդունման և հանձնման ակտ կապալառուի և պատվիրատուի միջև:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Թույլ չտալ թունավոր արտանետումների նորմայից ավել քանակություններ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Շին աղբով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը:

<u>Բնակելի համալիր</u>

Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Պ. Սեվակի փող. 51/11 և Տոնյան փող. 14 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի նախագիծը /պատվիրատու «Էյջ Բի Գրուպ» ՍՊԸ/ մշակված է անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման N20092019-01-0141 եվ N04022020-01-0062 վկայականների եվ ճարտարապետահատակագծային առաջադրանքի N 01/18-07/2-90504-1349 առ. 26.12.2019 թ. համաձայն

«Էյջ Բի Գրուպ» ՍՊԸ -ն սեփականության իրավունքով ձեռք է բերել Արայիկ Հայրապետյանին պատկանող 0.09563 հա հողատարածքը /վկ. n 13112019-01-0223/ եվ ներկա դրությամբ հանդիսանում է երկու հողատարածքների սեփականատերը /վկ. N 20092019-01-0141 եվ N 04022020-01-0062/ որի ընդհանուր մակերեսը կազմում է 0.55923 հա:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը բաղկացած է Ա, Բ և Գ մասնաշենքերից: Տրանսպորտային մոտեցումը դեպի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր, նախատեսվում է դրոյի փողոցից եվ հանդիսանում է որպես գլխավոր մուտք: Բնակելի համալիրը ունի նաեվ երկրորդ մուտք, որը իրականացվում է Պարույր Սեվակ փողոցի կողմից, մուտքը չծանրաբեռնելու համար:

Տարածքը ունի 12.4% թեքություն եվ հարավային կողմնորոշում: հողամասում գոյություն ունեցող շինությունները ենթակա են քանդման:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը ունի ուղղանկյունաձեվ հատակագծային հորինվածք, ելնելով տվյալ տարածքի քաղաքաշինական միջավայրից եվ հողամասի երկրաչափական ձեվից:

Բնակելի համալիրի դիրքը պայմանավորված է.

ա. հեռավորությոինների նորմատիվային պահանջներով

բ. բնական լուսավորության հաշվարկներով

Բազմահարկ բնակելի համալիրը կազմված է երեք մասնաշենքերից, որի մեջտեղի մասնաշենքը ունի 16 վերգետնյա հարկ, իսկ եզրային երկու հատվածները 18 վերգետնյա հարկերից:

Երեք մասնաշենքերը միմյանցից առանձեացված են հակասեյսմիկ կարաններով:

Շինության 0.000 նիշը ընդունված է առաջին հարկի հատակի նիշը;

Բնակելի համալիրը ունի նաեվ երեք ստորգետնյա հարկ, որտեղ նախատեսված է 120 մեքենայի համար ավտոկայանատեղի, ներկառուցված պոմպակայան, օժանդակ սենքեր։

Մեքենաների մուտքը ստորգետնյա ավտոկայանատեղի միակողմանի են, թեքահարթակներով։

Բացի ստորգետնյա ավտոկայանատեղից, կառուցվելու է նաեվ վերգետնյա 120 մեքենայի համար բազմահարկ մեխանիկական ավտոկայանատեղի ։

Ընդհանուր ավտոկայանատեղիի քանակը կազմում է 300 ավտոմեքենա։

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը ունի 273 բնակարան որոնք սպասարկվում են երեք մուտքերից։ Յուրաքանչյուր մուտք ունի աստիճանավանդակ եվ երկու վերելակ 800 եվ 1275 կգ բեռնաբարձությամբ։

Վերելակներից 1275 կգ-ոցը նախատեսված է հրշեջ ստորաբաժանում տեղափոխելու համար։

Վերելակների եվ աստիճանավանդակների նախասրահի դռները ինքնափակվող են, հերմետիկ եվ հակահրդեհային։ Միջանցքները սարքավորված են ծխահեռացման համակարգով։

Բնակարաններում նախատեսվում են հրդեհի ազդանշման տվիչներ։

Բնակելի համալիրի առաջին եվ երկրորդ հարկերի ճակատները երեսապատվում են սրբատաշ բազալտով, իսկ երրորդ հարկից դեպի վերջին հարկը նախատեսված է երեսապատել բարձր որակի բնական քարով եվ սվաղով։

Հնարավոր է նաեվ երեսապատման այլ նյութերի կիրառում, որոնք չեն հակասում ՀՀ գործող շինարարական նորմերին։

Արտաքին պատերի եվ միջնորմների իրականացման համար նախատեսվում է օգտագործել պեմզաբլոկ։

Տանիքը հարթ, համատեղված ճկուն փաթթեցային ծածկույթով եվ կազմակերպված ջրահեռացումով։

Հատակները նախատեսվում է կառուցել բոլոր միջհատակային հաղորդագծերը տեղադրելուց հետո։

Նախագիծը մշակված է համաձայն

-ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում

- ՀՀՇՆ 31-01-2014 բնակելի շենքեր. մաս1 .բազմաբնակարան բնակելի շենքեր

- ՀՀՇՆ 21-01-2014 շենքերի եվ շինությունների հրդեհային անվտանգություն

- ՀՀՇՆ IV-11.03.03-02 ավտոկայանատեղի

<u>Տեխնիկականտնտեսական ցուցանիշներ</u>

Հողամասի մակերես 5592.3 մ²՝

- Կառուցապատման մակերես - 2249.6 մ²
- Կանաչապատման մակերես - 2215 մ²
- Բարեկարգման մակերես - 1127.7 մ²

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

1.5.3 *Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ*



Գլխավոր հատակագիծ



1.5.4 *Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց*

Շինարարության տևողությունը հաշվարկված է ըստ ՄՆԻՊ 1.04.03.2008-ի նորմերով,կազմում է 27 ամիս, այդ թվում 1 ամիս նախապատրաստական փուլ:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ



ԱՊԱՍՊՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ -- 5 ԱՄԻՍ

ՄԻՆՉԵՎ 0.00 ՆԻՇ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ -- 12 ԱՄԻՍ

ԸՆՀԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ -- 34 ԱՄԻՍ

2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով[a] բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի« կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով[a] գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության[a] անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

2.1 Նախապատրաստական և հողային աշխատանքներ

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները.

- տարածքի համահարթում,
- ժամանակավոր ցանկապատի տեղադրում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- երկրաբաշխական բաժանարար ցանցի տեղադրում,
- կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում / անհրաժեշտության դեպքում/,
- հողային և կառուցման աշխատանքներ մինչև զրոյական նիշ,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով՝ KOMATSU PC 400-7 կամ Hyundai 170W տիպի էքսկավատորով՝, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Մշակված գրունտը պահպանվում է փորվածքների ետլիցքի նպատակով, մյուս զգալի մասը՝ տեղափոխվում:

Ետլիցքը անհրաժեշտ է իրականացնել շերտային տոփանմամբ ծանր տոփանիչներով, իսկ շինարարական կոնստրուկցիաների անմիջական մերձակայքում՝ ձեռքի տոփանիչներով:

Համահարթման և արտաքին ետլիցքի ժամանակ առաջարկվում է կիրառել KOMATSU D37-EX-22 հարթաշերեփի 1.77 մ3 տարողությամբ բուլդոզեր:

Կոնստրուկցիաների ամրանավորումը առաջարկվում է իրականացնել ինչպես առանձին ձողերով, այնպես էլ ամրանային կմախքներով և ցանցերով: Բետոնացումից առաջ անհրաժեշտ է ստուգել ամրանի, միջադիրների և կաղապարամածի տեղադրման

ճշտությունը, ամրանը պետք է մաքրված լինի կեղտից և ժանգից: Բետոնի խտացումը անհրաժեշտ է իրականացնել խորքային և մակերեսային թրթռիչներով:

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է СБ-69Б ավտոբետոնախառնիչներով՝ վերամբարձի միջոցով տեղադրման վայր հետագա տրմամբ:

Միաձույլ կոնստրուկցիաների իրականացումը նպատակահարմար է իրականացնել անջատ եղանակով: Առաջարկելի է տիպարային տեխնոլոգիական քարտերի կիրառումը:

Մարդկանց շարժումը բետոնացված մակերևույթների վրա և կաղապարամածի տեղադրումը թույլատրվում է բետոնի 1.5 ՄՊա ամրության ձեռքբերումից հետո:

Հիմքի, սյան կաղապարամածի քանդումը թույլատրվում է բետոնի նախագծային 70% ամրություն ձեռք բերումից հետո, ծածկի համար ՝ 80%:

2.2 Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր մակերեսը մոտ 13710,0 մ^2 է, ծավալը մոտ 39,56 հազ.մ^3, կառուցվում է որպես միաձույլ երկաթբետոնե սյունահեծանային հիմնակմախքով կրող համակարգ որի արտաքին և ներքին մակերեվույթները կարկասի լցվածքի ձևով շարվում են տուֆ քարերով,որոնք մետաղական կեռիկներով ամրակցվում են հիմնական երկաթբետոնե կարկասին: Հիմքերը նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնե խաչահատվող ժապավեններով: Ըստ առավել համապատասխան գլուխ N 3 1. բնակելի շենքեր, N 13 կետերը համադրելով շինարարական արտադրանքի տեխնոլոգիական առանձնահատկությունների հետ շինարարական տևողությունը սկսման օրվանից կազմում է 20 ամիս մեկ միավոր մասի շինարարության համար: Հաշվի առնելով սեյսմակայունության գործակիցը՝ 1,30 (20x1.3=26.0), բարձր լեռնային շրջաններում աշխատանքների կատարման գործակիցը՝ 1,15 (26.0x1.15=29.9) և շինարարական մրցույթային փասթաթղթերի եռամսյա նախապատրաստական և ավարտական փասթաթղթերի ձևակերպման 1 ամսյա փուլերը՝ ընդհանուր կոմպլեքսի նորմատիվ տևողությունը ծրագրվում է 29,9+4 = 34 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թուլյատրման տրամադրման օրվանից՝:

Բանվորների առավելագույն քանակը կազմել է 160 մարդ, միջինը՝ 111 մարդ:

2.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	KOMATSU PC 400-7	2
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	2
4	վերամբարձ ավտոկռունկ	Галичанин КС-65713-1	1
5	Աշտարակային կռունկ	TEREX CTT 91-TS12	1
6	Տոփանիչ	CR 3/60	2
7	Գույքային կաղապարամած	կոմպլ.	3
8	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	3
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	3
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИВ-4	3
11	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	2
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	6
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	2
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	3
15	Թրթրագլդոն	HAMI 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрАЗ-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МАЗ-5550	հաշվարկով

2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 31400մ³

Հետլիցք՝ 4350մ³

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևան քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից :

2.5 Շինարարության ջրի և էներգառեսուրսների պահանջարկը

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

Էներգառեսուրսների և ջրի պահանջարկ

NN	Անվանում	Չափման միավոր.	Պահանջարկ
1	Էլեկտրաէներգիա	Բհաշվ,ԿՎԱ	105.0
2	Ջուր	մ³/օր	8.0
3	Խտացված օդ	հատ	1 կոմպրեսոր

Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10լ/վրկ

Նշված պահանջարկները պետք է ապահովվեն ժամանակավոր տրանսֆորմատորային ենթակայանից և ջրմուղի քաղաքային ցանցից:

Շինարարության մատակարարումը ացետիլենով, թթվածնով իրականացվում է կենտրոնացված եղանակով:

Ստորև բերվում են ջրօգտագործման հաշվեկշիռը և անհրաժեշտ էլեկտրական հզորության հաշվարկը:

Հաշվարկ

Երևան քաղաքի ավան վարչական շրջան հասցեում բարձրահարկ բազմաբնակարան շենքերի կառուցման համար անհրաժեշտ էլեկտրական հզորության՝ մեկ միավոր մասի շինարարության համար

1. Աշտարակային կռունկ TEREX CTT 91-TS12 18

2. Տոփանիչ CR 3/60 5

3. Եռակցման սարքեր / 2 հատ 10

4.Տարբեր էլեկտրաուժային սարքավորումն

/դակիչներ, դուրեր, սղոցներ և այլն/ 15

5. Էլեկտրաթրթռիչներ 18

6.Շինհրապարակի լուսավորում և կենցաղ 10

7.Շենքի լուսավորում 8

Р տեղ.=84 ԿՎտ

Р հաշվ.=Рտեղ.* Кպահանջ.=84ԿՎտ / 0,8= 105,0 ԿՎտ

Ջրօգտագործման հաշվեկշիռ

Անվանում	չափ. Միավ.	չափ. Միավ	Հիմք	Միավ. Ծավ.	Պահանջվող որակ	Ծավալ մ3/օր խմելու.	Ծավալ մ3/օր տեխնիկ.
1	2	3	4	5	6	7	8
Տնսեսական/կենցաղային կարիքներ							
Կենցաղային ցնցուղ-լվացարան	1աշխատ.	23	Пособие к СНиП 3.01.01-85	0.016	խմելու.	0.368	
Կենցաղային	Н	46		0.025	խմելու.	0.75	
Դողերի լվացում	մեքենահատ	6		0.14	տեխնիկական		0.84
Բետոնի պատրաստ.	Բետոն մ3	3.0		0.72	խմելու.	2.16	
Բետոնի խնամք	ջրում,մ3	20		0.0314	խմելու.	0.63	
Շինհրապարակի մաքրում	ջրում,մ2	800,0		0.004	տեխնիկական		3.20
Ընամենը՝						3.91	4.04

Ջրամատակարարումը կիրականացվի է գոյություն ունեցող ջրատարից, համապատասխան տեխնիկական պայման ստանալուց հետո, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

2.6 *Արտաքին ցանցեր*

ԽՄԵԼՈՒ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացնելու է համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում):

Արտաքին ցանցը մոնտաժվում է պոլիէթիլենային բարձր ճնշման խողովակներից PE PN 16 Φ125x11.4 մմ խողովակներից Φ65;50մմ:

Խրամուղու մեջ խողովակները անցկացվում են 1.2մ խորության վրա:

Խրամուղիների հետլիցքը նախատեսված է ավազով.

Արտաքին հրդեհի մարման համար շենքի տարածքում նախատեսված է տեղադրել Φ125մմ հրդեհային հիդրանտ.

ՏԱՔ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Տաք ջրամատակարարումը իրականացվում է բնակարաններում նախատեսված կաթսաներից: Ներքին ցանցը մոնտաժվում է պոլիպրոպիլենային խողովակներից:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂԻ

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծված ներտարածքային արտաքին ցանցի մեջ և թափվում են Դավիթ Անհաղթ փողոցով անցնող Φ500մմ կոյուղագծի մեջ.

Անձրևաջրի հոսքերը շենքի տանիքից հեռացվում են նախագծվող հեղեղատարի մեջ և թափվում են Դավիթ Անհաղթ փողոցով անցնող Φ700մմ հեղեղատարի մեջ. Արտաքին կոյուղագծերի ցանցերը անցկացվում են պոլիէթիլենային ծալքավոր կոյուղու խողովակներից SN-8 Φ200,300մմ:

Դիտահորերը նախատեսված են հավաքովի ե/բ տարրերից Φ1.0մ տրամագծով.

ՆԵՐՔԻՆ ՋՐՀՈՍ

Հարթ տանիքից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանում են անձրևատար կոյուղու բակային ցանց, որը միանում է փողոցային հեղեղատարին: Ներքին ջրհոսը նախատեսված է պոլիէթիլենային ՊՆԴ "Т" տիպի խողովակներից, որոնք միանում են ռետինե սեղմիչ օղակներով: Խողովակների մեջ ջրի սառեցումը բացառելու համար հարկավոր է նախատեսել էլեկտրական պարուրակ:

Ավտոկայանատեղերի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերի հեռացման համար նախատեսված են հոսակներ և ջրհավաք առվակներ, որոնցից ջրերը հեռանում են կուտակիչ հոր և այնտեղից պոմպերով մղվում ավելի բարձրադիր կոյուղու քաղաքային կոլեկտոր:

2.7 *Էլ. մատակարարում*

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էլեկտրամատակարարումն կիրականացվի <<ՀԵՑ>> ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում):

2.8 *Գազամատակարարում*

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գազամատակարարումը իրականացնելու համար կառուցապատողը կդիմի «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

Բնակելի համալիրի ջերմամատակարարման համար կաթսայատուն չի նախատեսվում, ջերմամատակարարումը իրականացվելու է անհատական:

2.9 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Բնակելի համալիր տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգմնա հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Պարույր Սեվակի փողոց 51/11 և Տոնյան փողոց 14 հասցեներում:

Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Տեղանքը հարթ է: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

3.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Հետազոտվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում:

Համաձայն “ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻՋՅԱՆՆԵՐ” ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներա-երկրաբանական եզրակացության հետազոտվող տարածքին բնորոշ են հետևյալ պայմանները.

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքն գտնվում է Երևան քաղաքում և տարածքին բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարահարթի Քանաքեռ-Զեյթուն տեղամասը, որին հարավ-արևելքից հարում են Զրվեժ-Զրվեժի հրաբխային սարավանդերի լանջերին, ինչպես նաև Գետառ գետի կիրճի զառիթափ լանջերին: Նախագծվող բնակելի շենքի տարածքը ներկայացնում է հրաբխային դելյուվիալ լանջի մի հատված, որը քաղաքաշինական կառուցապատման հետևանքով ենթարկվել է փոփոխման:

Մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 1270.0-1273.0 մետրի սահմաններում:

Տեղամասում մինչև 37 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում: Տեղամասի ինժեներաերկրաբանական և ջրաերկրաբանական բնութագրերով հորատման արդյունքների հիման վրա մասնակցում են գրունտերի հետևյալ տեսակները՝

Երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ 4 շերտերը։

Շերտ -1 Լիցքեր՝ կազմված խճից, խճավազից, մանրաբեկորներից և մինչև 20-25% կավավազներից։ Գրունտը թույլ խոնավ է։ Շերտի հորատված հզորությունը 0.8-3.1 մետր է։ Համատարած է։ Ժամանակակից տեխնածին առաջացումներ են։

Գրունտն ըստ СНиП IV-5-82-Ç (24б) III կարգ է։

Շերտ-2(e-dQ4) Բեկորային գրունտ խճի ու խճավազի պարունակությամբ, կավավազային լցոնի 10-15% պարունակությամբ։ Բեկորները բազալտային կազմի են, լցոնը շագանակագույն և պինդ թանձրության։ Շերտի հորատված հզորությունը 3.1 մետր է։ Ունի մասնակի տարածում։ Ժամանակակից էլյուվիալ-դելյուվիալ առաջացումներ են։

Գրունտը ըստ СНиП IV-5-82-ի (6д) Vp կարգ է։

Շերտ-3 (βN2) Բազալտներ մոխրագույն, թույլ ծակոտկեն, տեղ-տեղ ծակոտկեն և խոռոչավոր, բեկորային անջատումներով, կարծր։ Շերտում հանդիպում են խարամների ոչ մեծ հզորության գնդաձև և ոսպնյակաձև ներփակումներ։ Շերտը համատարած է։ Շերտի հորատված առավելագույն հզորությունը 7,7 մետր է։ Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ »Ý։

Գրունտներն ըստ СНиП IV-5-82-ի (19) VII կարգ է։

Շերտ-4 (βN2) Խարամներ կարմրավուն, ծակոտկեն և խոռոչավոր, ավազային և խճային կառուցվածքի։ Շերտն ունի լայն տարածում։ Հորատված առավելագույն հզորությունը 18,0 մետր է։ Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ »Ý։

Գրունտներն СНиП IV-5-82-ի (40в) III կարգ է։

Ստորգետնյա գրունտային ջրերը տեղամասում բացակայում են։

Շրջանի և տեղամասի սեյսմիկ ֆոնային արժեքը որոշված է 9 բալ (0.4g)։

3.2 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները։ Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով։

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների։

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան –30 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է +42 °C։ Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն։

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-3.4	-0.9	5.3	12.4	17.4	21.6	25.5	25.2	20.5	13.5	6.5	-0.2	**12.0**

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
78	73	63	55	55	49	45	44	49	60	72	78	**60**

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում: Էրեբունի կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում 316 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Ձյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը – 70 կգ/մ^2: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Ձյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը միջին / մաքսիմալ օրական, մմ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
24 21	26 23	32 34	43 29	52 42	27 31	13 29	10 26	13 51	26 35	28 36	22 28	**316** **51**

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ^2:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-"Էրեբունի" մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

ամիս	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, % քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	3 2.0	10 2.1	13 2.2	16 2.8	20 2.6	26 2.3	9 2.7	3 3.4	78
IV	7 3.1	14 2.9	8 2.4	18 3.5	18 3.0	16 3.0	13 4.1	6 3.4	50
VII	17 5.5	31 5.9	3 2.2	9 2.4	16 2.1	13 2.5	7 2.7	4 4.6	40
X	5 2.7	18 2.3	10 1.8	11 2.5	19 2.2	22 2.2	10 2.8	5 3.7	70

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 2.5 – 2.7 աղյուսակներում:

Արեգակնային ճառագայթում (Երևան)

Աղյուսակ 2.5.

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ^2												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
264	423	586	804	1043	1182	1068	1047	842	620	339	214	**700**

Արեգակնային փայլի տևողությունը (Երևան "Ագրո")

Աղյուսակ 2.6.

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
89	118	169	212	283	334	359	352	300	246	144	90	**2696**

Ամպամած օրերի քանակը (Երևան "Ագրո")

Աղյուսակ 2.7.

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
10	6	4	2	0.2	0.1	0	0.1	0.3	1	4	11	**39**

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 2.8 – 2.9 աղյուսակներում:

Կլիմայական բնութագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.8.

Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի	
ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ հինգօրյակի		միջինը ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամպլիտուդա	Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (°C) ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝								
ապահովվածություն															
0.98	0.92	0.98	0.92				0	8	10	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	գերակշռող ուղղություն-ը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	հունվարին միջին արագությունները առավելագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
-21	-19	-19	-17	-3.6	-27	8.3	70 -2.4	140 1.0	159 1.8	78	68	132	60	Հվ	2.6

Կլիմայական պարամետրերը տարվա տաք ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.9.

Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի	
ապահովվածություն		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական ամպլիտուդա						
0.95	0.99				միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	օրական մաքսիմում	գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	հուլիսին միջին արագություններից նվազագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
32	34	42	33	15.6	45	28	154	51	Հվ	2.1

3.3 Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.







Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.







Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.







Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.







Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

3.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2018 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ$_5$-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

3.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

3.6 Հողային ռեսուրսներ

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 31400 մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 4350 մ^3 հետլիցք: Ավելցուկային 27050մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

3.7 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Գործունեության ենթակա տարածքում տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (E. repens), Սեզ սանրանմանը (E. cristatum), Սեզ մազակիրը (E. trichophora), Սեզ միջինը (E. intermedia), Սեզ երկարավունը (E. elongatum):

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

3.8 Կենդանական աշխարհ

Երևանի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը,

մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատ սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրազդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

3.9 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը՝ 1200-1300 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 2200տ շինարարական աղբը (քանդման աշխատանքներ և շինարարության փուլ): Շինարարական աղբը ամբողջությամ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բազմահարկ բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

4.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

4.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

4.3.1 *Մթնոլորտային օդ*

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

4.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով:

4.3.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

4.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը*

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

4.3.5 *Աղմուկ և թրթռում*

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

➢ խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;

